ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
+374(93-73-83-17), khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հոկտեմբերի 2022թվականի N 753

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ գլխի դրույթներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 29.08.2006թ. թիվ 13-Ն հրամանով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.2022թվականի նոյեմբերի 29-ին ժամը՝ 10:30-ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետի /ծածկագիր 3.2-21/ թափուր պաշտոնի մրցույթ /գ. Այգեշատ/:

2.2022թվականի նոյեմբերի 29-ին ժամը՝ 11:30-ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի /ծածկագիր 3.1-30/ թափուր պաշտոնի մրցույթ /գ. Ամբերդ/:

3.2022թվականի նոյեմբերի 29-ին ժամը՝ 12:30-ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետի /ծածկագիր 3.2-19/ թափուր պաշտոնի մրցույթ /գ. Ամբերդ/:

4.2022թվականի նոյեմբերի 29-ին ժամը՝ 13:30-ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի գլխավոր մասնագետի /ծածկագիր 2.3-1/ թափուր պաշտոնի մրցույթ:

5.2022թվականի նոյեմբերի 29-ին ժամը՝ 15:00-ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի առաջատար մասնագետի /ծածկագիր 3.1-21/ թափուր պաշտոնի մրցույթ:

6.Ապահովել համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների հայտարարության հրապարակումը:

7.Սույն որոշումն ընդունելուց հետո երկօրյա ժամկետում համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի մասին պատշաճ տեղեկացնել ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմին:

8.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

2022թ. հոկտեմբերի 28

Խոյ համայնք, գ.Գեղակերտ